
ՀԱԿՈՒ ՊԱՐՈՆՅԱՆԻ «ԱԶԳԱՅԻՆ ԶՈՋԵՐ»-Ի
ԳՐԱՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ՄԱՐԻԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

XIX դարի 70–80-ականները, երբ Հակոբ Պարոնյանը ստեղծեց «Ազգային ջոջերը», համընկնում էին Օսմանյան կայսրության պատմության տիրահոշակ «գուլումի» դարաշրջանին: Աբդուլ Համիդ II (1876–1908) կառավարման տարիներին կայսրությունում հրատարակվող պարբերականներին կարգադրված էր գրել միայն «փատիշահի աշխարհարժեք առողջության մասին», արգելված էր բնակչության բողոքների հրատարակումը, բարձրաստիճան անձանց վարկաբեկումը, թեկուզ, եթե նրանք մեղադրվեին գողության, կաշառակերության, սպանությունների և այլ հանցանքների մեջ: Արգելված էր օգտագործել մի շարք բառեր: Օտարերկրյա դիտորդներից մեկը Աբդուլ Համիդի ժամանակ լույս տեսնող մամուլն անվանել է «ամորձատված մամուլ»: □Զուլումի□ դարաշրջանում կրճատվեց թերթերի ու ամսագրերի թիվը: Թուրք հեղինակի վկայությամբ՝ «Գրաքննությունը խիստ և գերակա կսպաններ մամուլը: Մամուլի մեջ ուրիշ բան չէր կարդացվեր, բայց եթե սելամլիքի արարողությունը, պաշտոնավարությունները, աստիճանի բարձրացումները, պատվանշանի բաշխումները, ժամանումները և մեկնումները, շոգենավերու ժամանակացույցները և ծանուցումները»¹: Հայտնի է, որ խստացված գրաքննության պայմաններում զարգանում են գրականության հատկապես այլաբանական ու երգիծական սեռերը, որոնք ամենահարմարն են ճշմարտությունն ասելու, իրականությունը ճշմարտացիորեն ներկայացնելու համար: «Մահմանադրության հաստատման տարիներուն իբրև զավեշտախոս հրատարակիչ օրվան մարդն էր Հ. Սրվաճյան, և անկէ ետքը մեր մեջ Պարոնյանին բաժին եկավ յուր բարձրագույն աստիճանին հասցնել զավեշտական հրապարակագրությունը: Ժողովուրդը խնդացնելով հանդերձ հրահանգել, անհատական և ընտանեկան թերի և կործանարար աչքը բանալ և խրատել ո՛չ թե վարդապետական ծանրությամբ այլ զվարճալի մանրավեպերով և ծիծաղ շարժելով այնպիսի բաներու վրա, որոնք իրոք ծիծաղելի են. այս եղավ Պարոնյանի գործն իբրև գրագետ, և այս պաշտոնը կատարեց հայ ոգով, ընտիր ընթերցանությամբ սնած գրագետի մը ճաշակի փափկությամբ...»², – գրում է հրապարակագիր, խմբագիր Արամ Անտոնյանը (1875–1952):

¹ Վ. Բալբոլոբյան. Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 564:

² Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Երևան, 2004, էջ 175:

«Մեղուի» նախկին խմբագիր Հարություն Սվաճյանի³ մահից հետո Հակոբ Պարոնյանն արտոնատիրոջ իրավունքով թերթը շարունակում է հրատարակել «Թատրոն» անունով: 1874 թ. ապրիլի 6-ին լույս է տեսնում «Թատրոնի» առաջին համարը, որում որպես նախաբան, Պարոնյանը տպագրում է հարերգություն (պարողիա, ծաղրանմանություն – Մ. Գ.) Կ. Պոլսի լրագրության վերաբերյալ՝ վերստին հաստատելով իր հավատամքը՝ ձաղկել մոլորությունները, դատափել կեղծիքները, ասել ճշմարտությունը: Երգիծաբան-խմբագրի այլաբանությամբ՝ Պոլսում լույս տեսնող մոտ տասը թերթերի խմբագիրները ներկայանում են դերձակի խանություն: 1874-ի սկզբներին հրատարակված պատկերագրող թերթի՝ «Մանգումեի» խմբագիրը «մկրատ ի ձեռին կանանց համար նոր հագուստներ կը ձևե», «Մասիսը» կողով ի ձեռին բառարանին մեջեն պզտիկ բառեր կը ժողվե», «Օրագիրը» «տրամաբանություն մը կը թղթատե»: Այստեղ են նաև մյուս պարբերականների խմբագիրները՝ իրենց հատկանշող գրադմունքի նկարագրմամբ: Հանդիսավորությամբ ներս է մտնում «Թատրոնը»՝ ճշմարտության կերպարանքով: «Մանգումեն» մոտենում է նրան. «– Օրիո՞րդ, ապրիլ ամսու մոտայեն նոր շրջագգեստ մը կարե՞՞մ ձեզի: – Ոչ, կըսե ճշմարտությունը, ես հագուստի պետք չունիմ, ես այն ատեն միայն հագուստ կըլլամ, երբ բան մըն ալ չհագնիմ»:

Այս սրամիտ և հանդուգն հայտարարությամբ է Պարոնյանը սկսում «Թատրոնի» հրատարակությունը՝ մինչև վերջ հավատարիմ մնալով իր նպատակին:

Ճշմարտությունը երգիծանքի միջոցով ներկայացնելու Պարոնյանի տաղանդը լավագույնս դրսևորվեց ազգային երևելիների դիմապատկերներում, երևելիներ, որոնք կարևոր դերակատարություն ունեին XIX դարի երկրորդ կեսի հիմնականում արևմտահայ հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում, և որոնց բարոյական վարքագծից էր կախված հանրային, ազգային կյանքի որակը: Դիմանկարների նախատիպերը, բացառությամբ Գրիգոր Արծրունու, Կ. Պոլսից էին: Երևելիների մեջ «պիտի գտնվին էֆենտիներ, երեսփոխաններ, բժիշկներ, փաստաբաններ, խմբագիրներ և այլն»⁴: Ժամանակի նշանավոր հայերի կենսագրականները ներկայացված են փաստագրական ու վավերագրական այնպիսի ճշգրտությամբ, որ բնորոշ է վարքագրությանը: «Ազգային ջոջերը» գեղարվեստական երկ կարելի է համարել միայն այնքանով, որքանով կիրառվել է գեղարվեստի երգիծական ժանրը:

Ինչպես հայտնի է, Պարոնյանը շուրջ վեց տարի՝ 1874–1880 թթ., կենսագրական հավաստի տեղեկություններ է հավաքել իր դիմապատկերների համար և չի սահմանափակվել ազգային գործիչների միայն հանրային գործունեության ուսումնասիրմամբ: Հետագայում ուսումնասիրողներն ազգային երևելիներից շատերի մասին կենսագրական տեղեկություններ են վերցրել Պարոնյանի դիմապատկերներից:

«Թատրոն» պարբերականի էջերում Պարոնյանը սկզբում թարգմանաբար ներկայացրել է ֆրանսիական երգիծաթերթերում լույս տեսած կենսագրականներ՝ ժամանակի եվրոպական ականավոր գործիչների մասին: Իսկ ամիս-

³ Հ. Սվաճյանը (1831–1874) հիմնադրել և խմբագրել է «Մեղու» թերթը 1857–1862, 1865, 1870–1872 թվականներին:

⁴ Հ. Պ ա Ր ո ն Յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 25:

ներ անց՝ 1874 թ. սեպտեմբերին, նա ծանուցում է, որ այսուհետ պետք է սկսի տպագրել «ազգային գործոց մեջ դեր ունեցող երևելի անձանց» երգիծական կենսագրականները⁵: «Թատրոնի» 1874-ի սեպտեմբերի 11-ի թիվ 44-րդ համարում հրատարակվում է Բարունակ Ութուճյանի դիմապատկերը: Այնուհետև մինչև 1875 թ. հոկտեմբերի 4-ը շարունակում են հաջորդիվ⁶ տպագրվել մյուս «ազգային երևելիների»՝ Կարապետ Փանոսյանի, Նահապետ Ռուսինյանի, Խաչատուր Միսաքյանի, Օգսեն Խոճասարյանի, Կարապետ Ութուճյանի, Քրիստոստուր Ղազարոսյանի, Ստեփան Փափագյանի, Հակոբ Վարդույանի, Թադեոս Պեկյանի, Միմոն Յազըճյանի, Համբարձում Բփեկճյանի, Միմոն Ֆելեկյանի, Թովմաս Ֆասուլյաճյանի, Երանուհի Գարագաշյանի, Հովսեփ Շիշմանյանի (Ծերենց), Հովհաննես Տերոյենցի, Հարություն Մերիեմ Գուլիի կենսագրականները⁷, որոնցից տասնվեցի հեղինակը Պարոնյանն է, իսկ երկուսինը՝ Ռուսինյանինը և Տերոյենցինը՝ աշխատակիցները: Պարոնյանը Տերոյենցի դիմապատկերը գրել և հրատարակել է 1879 թ. «Լույսում»՝ հետագայում ամփոփելով «Ազգային ջոջերում»: Իսկ Ռուսինյանի մասին կենսագրական բնավ չի գրել⁸, ինչպես վկայում է Հ. Ասատուրը:⁹

1876 թ. սկզբներից Պարոնյանը «Թատրոնում» հարկադրված ընդհատում է դիմանկարների շարքի հրատարակումը: «Իբրև անաչառ քննադատ և երգիծող «Թատրոնը» ամեն կողմե բուռն հալածանքներու ենթարկվեց և «ջոջերը» բազմատեսակ խոչընդոտներ հարուցեցին անոր հրատարակությունը դադարեցնելու համար: Եվ հիրավի, «Թատրոնը» իր չորս տարվա գոյության ընթացքին, պատրիարքարանի, «ջոջեր»-ու և կառավարության արգելքներով ութը անգամ դադարման ենթարկվեցավ... «Թատրոն»ի այս «մոլեգին և անարգական ու վարկարեկիչ» ուղղությանն էլ չկրցան դիմանալ մեր պատրիարքարանն ու «ջոջերը», որոնք «Թատրոնի» հրատարակությունը դադարեցնելու, անոր ձայնը խեղդելու համար պաշտոնական դիմում-խնդրագիր ուղարկեցին կառավարությանը, որ անմիջապես և վերջնապես դադարման ենթարկեն «Թատրոնը», «սանձահարելով անոր թունտ լեզուն»¹⁰, – կարդում ենք մամուլում:

1879 թ. սեպտեմբերից Պարոնյանն սկսում է խմբագրել «Լույս» եռօրյա թերթը, որում էլ, ընթերցողների առաջարկով, վերսկսում է հրատարակվել երգիծական կենսագրականները, որոնցից ութը՝ Կ. Փանոսյան, Խ. Միսաքյան, Կ. Ութուճյան, Ք. Ղազարոսյան, Ստ. Փափագյան, Հ. Բփեկճյան, Հ. Շիշմանյան, Հարություն Մերիեմ Գուլի, կրկին հրատարակվում են՝ գրեթե նորից գրված: «Լույսում» առաջինը Խորեն Գալֆայանի դիմանկարն էր, որին հաջորդում են Տիգրան Յուսուֆյանի, Ստեփան Ասլանյանի, Հովհաննես Տերոյենցի, Մկրտիչ

⁵ «Թատրոն» (Կ. Պոլիս), 4.IX.1874:

⁶ Առաջին կենսագրությունից 15 օր անց Պարոնյանը «Կենսագրություն» վերնագրով տպագրում է նոր դիմանկար՝ ոմն օրիորդ Մ-ի մասին, որը, սակայն, չի ավարտում:

⁷ Պարոնյանը «Ազգային ջոջեր» վերնագիրը սկսել է օգտագործել, երբ 1880-ին առանձին գրքով հրատարակել է երգիծական կենսագրությունների շարքը:

⁸ Մինչդեռ 1964 թ. լույս տեսած մեծ երգիծարանի «Երկերի ժողովածուի» երկրորդ հատորում «Ազգային ջոջերի» շարքում ներառված, ընդ որում՝ առաջին անգամ, Տոքթոր Ռուսինյանի դիմապատկերը վերագրվել է Պարոնյանի գրչին:

⁹ Տե՛ս Տարեցույց Նշան-Պապիկյան, Բ. տարի, Կ. Պոլիս, 1906, էջ 125:

¹⁰ «Գաղափար» (Թիֆլիս), 1916, թիվ 41:

Տիգրանյանի, Անտոն Հասունյանի դիմանկարները: 1880 թ. հունվարից մարտի 26-ը տպագրվում են Սուրբաս Քազանձյանի, Վահան Պարտիզակցու, Գրիգոր Արծրունու, Գրիգոր Էնֆիաձյանի, Պողոս Պոյնուելրիյանի, Հովհաննես Մյուհենտիսյանի, Սարգիս Պալյանի, Կարապետ Երամյանի, Ներսես Վարժապետյանի դիմանկարները: Այնուհետև «Լույսում» «Ազգային ջոջերի» տպագրությունն ընդհատվում է: Պատճառը, ինչպես վկայում է Մ. Մամուրյանը, «... այդպիսի կենսագրականներ գրելու բարձրեն եկած արգելքն էր»¹¹:

Նկարագրելով ազգային երևելիներին ինչպես որ կան՝ իրենց առավելություններով ու թերություններով և նախընտրելով հումորի ժանրը (ճշմարտությունը դյուրին է ընկալվում, երբ հումորով է ասված)՝ Պարոնյանը ցույց է տալիս, թե ինչպիսին պետք է լինի և չպետք է լինի ազգային, հանրային գործիչը, որի բնավորության առաքինի հատկություններով է իմաստավորվում հասարակական կյանքի բովանդակությունը, պատմության ընթացքը: Առաքինի վարք նկարագրելիս նա ոչ միայն հակադրում է երևելիներին, նրանց վարքականոնները, այլև դրվատավոր ազգային գործչի վարքագիծը որպես բացառություն է ներկայացնում տիրող բարքերի ու դրանց կրողների համեմատությամբ: Պարոնյանի բարոյախոսական ըմբռումների բանաձևումը ժամանակի պոլսահայ իրականության մեջ եղավ «Ազգային ջոջերը»:

Պարոնյանի գրական դիմապատկերները մամուլում հրապարակվելու օրվանից լայն արձագանք ունեցան: «Ազգային ջոջերի հեղինակն է»՝ նրա մասին ասում էին ժամանակակիցները: Ազգային երևելիների կենսագրականները երևույթ էին հայ և, հատկապես, արևմտահայ իրականության մեջ: Այդ օրերին Մատթեոս Մամուրյանը գրում է Հրանտ Ասատուրին. «Ինչպես հայտնի է, Թատրոնը մինչև անգամ անտարբերները կը լափեին»¹²: «Լույս»-ի վերաբերյալ էլ վկայում է. «Լույս այստեղ ձեռք է ձեռք կը հափշտակվեր, հափշտակելով միտք ու սիրտ, և իր (Պարոնյանի – Մ. Գ.) Ջոջերն լափելով կը լափեին»¹³: Եղիա Տեմիրճիպաշյանը, կարդալով «Ազգային ջոջերը», գրում է հեղինակին. «Պիտի գամ անձամբ համբուրել այն գրիչն, որով կը ձաղկեք անբարոյակալությունն և կը ծաղկեք առաքինությունն, որով կը պապանձեցրնեք նախապաշարումն և կը պարծեցնեք Ազատ մտածումն»¹⁴: Ազգային երևելիներին իրենց իրական կերպարներով ու անսպառ բնութագրումներով հեղինակի կողմից ներկայացնելու վերաբերյալ Հրանտ Ասատուրը նկատում է. «Իր թվարկած անձանց մոտեն ճանչցած եմ և կ'գմայլեմ տեսնելով անաչառությունն, որով Պարոնյան կրցած է դուրս ցայտեցնել անոնց հատկանշական կողմերը, անոնց տկարությունները, անոնց մոլությունները և կրքերն ալ»¹⁵:

Բազմաթիվ են ժամանակակիցների համանման վկայությունները, կարծիքները, Պարոնյանի գրական դիմապատկերների վերաբերյալ ջատագովական բնութագրումները, որոնք վերագրվում էին հեղինակի տաղանդին, իմա-

¹¹ «Արևմուտք» (Փարիզ), 1945, թիվ 37:

¹² Տարեցույց Նշան-Պապիկյան, Բ. տարի, էջ 117:

¹³ Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, էջ 111:

¹⁴ «Արևելյան մամուլ» (Զմյուռնիա), 01. V. 1880, էջ 59–60:

¹⁵ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի ֆոնդ, թ. 143:

ցական, ճանաչողական կարողություններին, ինչպես նաև համարձակությամբ, խիզախումին: Իսկ ինքը՝ Պարոնյանը, գրել է. «Մենք այս հրատարակությամբ աշխատած ենք մեր ազգի մեջ գտնված երևելի անձերուն կենսագրություններն ընելով՝ անոնց թերություններն ցույց տալ այն անաչառությամբ, որ կենսագրե մը կը պահանջվի առանց սակայն դուրս ելնելու հեզնաբանության սահմանները»¹⁶:

«Ազգային ջոջերում» երևելիները ներկայացվում են իրենց մասնագիտական ոլորտներում, զբաղվածության, պաշտոնի դիրքերից, որոնք առավելապես բնութագրում են նրանց:

Ժամանակակցի վկայությամբ՝ «Թատրոնի տնօրեն-խմբագրի ամենեն բարկ երգիծանքները իր պաշտոնակիցներուն կուղղվեին»¹⁷:

Առաջին կենսագրականը «Կիլիկիայի» խմբագիր Բարունակ Ութուճյանին (ծնվ. 1831) է: Դիմապատկերը ծավալով զիջում է հաջորդներին, սակայն ոչ զավեշտաբանությամբ: Մասնագիտությամբ բժիշկ Բ. Մ. Ութուճյանը բժշկագիտական հանդես էր հրատարակում, որում, սակայն, ավելի շատ էին պատմական, գրական նյութերը, նաև ասույթներ Բ. Ֆրանկլինից: Պարբերականի նախնական ուղղվածության և տպագրվող նյութերի միջև ակնառու անհամապատասխանությունը՝ վերնագրից սկսած, Պարոնյանին ընձեռում է երգիծելու հնարավորություն. «... Սկսավ բժշկական թերթ մը հրատարակել, որուն մեջ ազգային հողվածներ կը գրեր, երբեմն ալ բժշկական»¹⁸: «Խմբագիր-ընթերցող Կիլիկիա հանդեսին». այսպես է երգիծաբանը բնութագրում Բ. Ութուճյանին:

Պարոնյանը հաճախ համակարծիք չէր հայատառ թուրքերեն պարբերականի՝ «Մանգումե Էֆքյար» («Մտքերի շարք») թերթի խմբագիր Կարապետ Փանոսյանի (1826–1905) հետ և առիթը բաց չէր թողնում սրախոսությամբ ընդդիմանալու նրան, թեև գնահատում էր պատրիարքարանի դեմ թերթի «արդարացի հարձակումները», որոնք լավ ընդունելության էին արժանանում ժողովրդի կողմից, այն ժողովրդի «որ մինչ այդ կը կարծեր, թե ամիրայի մը թաշկինակին դեմ խոսիլը երկնից դեմ ապստամբիլ էր»¹⁹:

Կ. Փանոսյանը լրագրություն մուտք գործեց 1859 թ. «Մյունստի էրիճաս» («Արգիռսի մունեսիկ») հայատառ թուրքերեն թերթով: 1863-ին Չեթոնի ինքնապաշտպանության վերաբերյալ հրապարակումները պատճառ հանդիսացան, որ լրագիրը խափանվի և Փանոսյանը բանտարկվի: Պարոնյանը ողջունում է խիզախ խմբագրի՝ «քաջ ախոյան հանդիսանալու» այս հանգամանքը: 1866-ին Փանոսյանը հաջողում է հրատարակել «Մանգումե Էֆքյարը»:

Նկատենք, որ երկու թերթերն էլ հեղինակություն էին վայելում ոչ միայն թրքախոս հայերի, այլև թուրքերի շրջանում: «60-ական թվերին (XIX դարի – Մ. Գ.) լրագրությունը շատ էր ծաղկած հայոց մեջ, որոնք բացի հայերեն թերթերից ունեին նաև հայատառ թուրքերեն լրագիրներ՝ թրքախոս հայոց համար, ինչպես Կարապետ Փանոսյանի «Մյունստի» կամ «Մանգումե Էֆքյարը»... - Թուրքերը ընտիր մի թերթ չունենալով, շատերը հայոց գրերը սովորեցին և

¹⁶ Հ. Պարոնյան. Երկերի ժողովածու, հ. 2, էջ 7:

¹⁷ Տարեցույց Նշան-Պապիկյան, Բ. տարի, էջ 112:

¹⁸ Հ. Պարոնյան. Երկերի ժողովածու, հ. 2, էջ 245:

¹⁹ Նույն տեղում, էջ 86:

«Մանգումե» ... էին կարդում, ուր գտնում էին եվրոպական հեռագրեր, մտածված առաջնորդողներ և քաղաքական դրության լավ պատկերը»²⁰, – հավաստում է Հրայր Աճառյանը:

Գիտակցելով Կ. Փանոսյանի և նրա թերթի դերը՝ Պարոնյանը երգիծում է ժամանակ ու ջանքեր կորզող այն ապարդյուն, տևական գրավեճը, որ ծավալվել էր «Օրագրի» ու «Մանգումեի» (և ոչ միայն դրանց) միջև: «Փանոսյանը պզտիկ մարդ չէ և Ազգային ջոջերու մեջ այժոռ ունենալու իրավունք ունի»²¹, – վստահեցնում է Պարոնյանը:

Բայց և «Մանգումեի» խմբագրի տեղի-անտեղի անվանարկելու սովորությունը չի վրիպել երգիծաբանի աչքից: Այս առթիվ Պարոնյանը հրապարակում է մի երգիծապատում՝ «Ֆանթեզի», որը հետագայում ընդհանուր գծերով տեղ է գտնում երևելու դիմապատկերում: Այդուհանդերձ նա նախապատվում է անվայել ոճով պաշտպանված Փանոսյանի ճշմարտությունն այլոց կեղծ, ծախու, «վսեմափայլ», «բարձրաշխարհիկ» ածականներով կոծկված ճշմարտությունից: 1866-ին Փանոսյանը Նիկոմեդիայի «սովալլուկ ազգայիններու համար» այլուր է հայթայթում՝ անձամբ գումար խնդրելով ազգային մեծատուններից: Եվ Պարոնյանի դիտարկմամբ՝ այդ գործն ավելի շուտ է հաջողում, քան Ազգային ժողովն այդ մասին որոշում կրնալուն:

Մեծ երգիծաբանը, որոշակի վերապահումներով, Կ. Փանոսյանին անվանում է «մեծ բարեկարգի», «հանդուգն ձեռներեց», «լուսավորիչ», որ շատ ծառայություններ կարող է մատուցել ազգին: Իսկ վերջինս «դժբախտաբար կավիճով պատի վրա կը գրե լրագրի սր բարիքները և օրացույցի մեջ կարձանագրե անոր թերությունները»²²: Չգնահատված լինելու հանգամանքը հաճախ է հետամուտ եղել ազգի երևելիներին:

Մյուս երևելի խմբագիրը, որին անդրադարձել է Պարոնյանը, Օզսեն Խոճասարյանն է (1838–1878): Այս հրապարակագրի կենսագրականը նա հրապարակում է «Թատրոնում», սակայն «Ազգային ջոջերի» առաջին հրատարակության մեջ չի զետեղում, քանի որ 1880-ին Խոճասարյանն արդեն մահացել էր: «Ազգային ջոջերն» այն ժամանակ ապրող նշանավոր հայերի կենսագրություններն էր ամփոփում: Պարոնյանի ստեղծած այս դիմապատկերն ամենից հաջողվածներից է: Որքան շատ են «հերոսի» թերությունները, այնքան երգիծանքը հաջողվում է: Օ. Խոճասարյանի կենսագրականում բացակայում է ծննդյան թիվը, որ սովորաբար բոլոր երևելիների դիմապատկերներում ստուգապես կա: «Ծնվելով ի թվականին, որ ոչ ոք կը հիշե այսօր», գրում է հեղինակն իր հերոսի ծննդյան թվականի վերաբերյալ: Միայն մի ծերունի այսպես է ասել Պարոնյանին. «Օզսենին ծնած օրը Սամաթիո սրճարաններուն մեջ կըսեին, թե ազգին դժբախտությունները հերիք չէին, նոր փորձանք մյ՛ալ ավելացավ»²³: Պարոնյանը երգիծական ակնարկություններով պատմում է, թե ինչպես է Օզսենը սովորել Սամաթիայի Ս. Սահակյան վարժարանում, Արևելյան պատերազմի ժամանակ (նկատի ունի 1853–1856 թթ. Ղրիմի պատերազմը – Ս. Գ.) ե-

²⁰ Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1999, էջ 20:

²¹ Հ. Պ ա Ր ո ն Յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 2, էջ 88:

²² Նույն տեղում, էջ 94:

²³ Նույն տեղում, էջ 274:

դել մի անգլիացի գորապետի թարգմանիչը, հետո էլ՝ հիվանդանոցում դասախոսություն կարդացել: Մի քանի պաշտոններ փոխելուց հետո Խոճասարյանը «Մանգումենտում» օգնական-խմբագիր է աշխատում, ապա կառավարության արտոնագրով իր անունով է փոխանցում Մարկոս Աղաբեկյանի «Ծիլն ավարայրի» (1866–1867) ամսագիրը՝ սկսելով հրատարակել իբրև օրաթերթ՝ «Օրագիր» անունով: «Այս թերթին մեջ այնքան շուտ սկսավ փոխել յուր կարծիքները, որ ընթերցողն ալ ետևեն չկրցավ հասնիլ»²⁴, – գրում է Պարոնյանը: Ակնարկելով իր հերոսի անսկզբունքայնությունը՝ կենսագիրն անդրադառնում է Փանոսյան-Խոճասարյան դատավեճին, որի ժամանակ «Օգսենը դատվելու գնաց և հաշտվեցավ, ետ դարձավ ճիշտ այն տղուն պես, որ դերձան առնելու կը դրկվի ու շաքար առնելով ետ կը դառնա»²⁵: Նա նաև գավելտի է վերածում Խոճասարյանի կեղծ օրինասիրությունը. «... Թե ծովու վրա խեղդվող մեկը տեսնե նե՛ ուրբաթ օրվան կսպասե, որ Ընդ. ժողով գումարվի և հոն առաջարկություն մը ընելով՝... խեղճը վտանգեն ազատե»²⁶:

«Հայոց խմբագիրներու նահապետ». այդպես էին անվանում «Մասիսի» խմբագրապետ Կարապետ Ութուճյանին (1823–1904): Դեռևս «Թատրոնում» Պարոնյանը խիստ լեզու է գործածում «Մասիսի» ու նրա խմբագրի դեմ, առիթը բաց չի թողնում ծաղրելու, հեզնաբանելու: Նա Ութուճյանի կենսագրականը գրում է «Լույսի» խմբագրման տարիներին՝ համադրելով 1874-ին «Թատրոնում» հրապարակած երգիծական անդրադարձները: «Կարապետ Ութուճյանը, յուր ամբողջությամբն առնելով, բարի և ազգին օգտակար մարդ մե՛... Իբրև խմբագիր մեծ թերություններ կրնա ունենալ, բայց իբրև սիալական մարդ մեծ առավելություններ ունի»²⁷, – ահա Պարոնյանի դիտարկումը: Նա հատկապես գնահատում է այն ծառայությունը, որ Ութուճյանը մատուցել է աշխարհաբարին՝ գտնելով օտար բառերի հայերեն համարժեքները, գործածությամբ նվիրագործելով հին բառերին տրված նոր առումները, հաճախ նոր բառեր կերտելով՝ գրաբարի բարդության և ածանցման օրենքների համաձայն:

Պարոնյանի ժամանակակից խմբագիրներից էին նաև Գևորգ Այվազյանը («Մամուլ»), Հակոբ Հաճյանը («Միմոս»), որոնց հայերենը առիթ էր տալիս երգիծաբանին՝ նրանց ծաղրելու: Գրեթե ամեն օր Պարոնյանի գրչի հարվածներից էին ենթարկվում Համբարձում Ալաճաճյանը («Փունջ»), Նիկողոս Թյուլպենտճյանը («Լրագիր»)՝ իրենց պարբերականներով հանդերձ: Սակայն նրանք չեն արժանացել «Ազգային ջոջերի» շարքում իրենց տեղն ունենալու պատվին:

Երգիծաբանը խնայել է միայն «Արևելյան մամուլի» խմբագիր Մատթեոս Մամուրյանին: Վերջինս 1872–1880 թթ. «Շահնուր» կեղծանունով նամակթղթակցություններ էր տպագրում □Արևելյան մամուլում□: Այդ թղթակցություններում «Թատրոնի» խմբագիրը միշտ հարգանքով է հիշվում: Մի առիթով Պարոնյանի վերաբերյալ Մամուրյանը գրում է. «Թեև անձնապես անձանոթ իրարու՝ փոխադարձ համակրությամբ կապված էինք, մեր պաշտոնակցության

²⁴ Նույն տեղում, էջ 250:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում, 252:

²⁷ Նույն տեղում, էջ 61:

և գաղափարակցության բերմամբ, այնպես որ նա մերթ Շահնուրի գրածներեն կարտատպեր և Արևելյան մամուլ թատրոնի»²⁸:

Պարոնյանն առանձնահատուկ ուշադրություն էր հատկացնում Կ. Պոլսի թատերական կյանքին, որը հիմնական գծերով ներկայացվում է «ազգային երևելիներից» երեքի՝ Հակոբ Վարդուլյանի (1835–1898), Թովմաս Ֆասուլյաճյանի (1843–1901) և Երանուհի Գարագաշյանի (1848–1924) դիմապատկերներում: «Օսմանցոց մեջ առաջին անգամ թատրոն մտցնողները հայերը եղան... Վարդուլյանը, Բենգյանը, Ռշտունին, Չափրաստյանը, Ֆասուլյաճյանը, Մնակյանը Պոլսում հիմնեցին... օսմանյան թատրոնները: Դերասանները՝ զլխավորապես հայեր, իսկ դերասանուհիները՝ բացառապես հայեր էին եղել, որովհետև թուրք կինը բեմ բարձրանալու իրավունք չունեցրեց»²⁹, – վկայում է Հ. Աճառյանը: Հ. Վարդուլյանի կենսագրականում Պարոնյանը գրում է. «Ճշմարտությունը խոսելով՝ Վարդուլյանի անխոնջ և անվհատ աշխատության շնորհիվն է, որ ազգն այսօր թատրոն մը ունի»³⁰: Դերասանական այն խումբը, որում հանդես էր գալիս Վարդուլյանը, մի քանի անգամ դադարեցնում է ներկայացումները: Վարդուլյանը հայտարարում է, որ թե՛ թատրոնը, թե՛ դերասաններին ինքը կարող է ապրեցնել: Եվ դերասաններին հավաքելով իր տնօրինության տակ՝ 1868-ին նոր խումբ է կազմում՝ Օսմանյան թատրոնը, որը տասը տարի անընդմեջ պիեսներ է բեմադրում: Թատրոնը դերասանուհիներով համալրելու համար Վարդուլյանից մեծ ջանքեր էին պահանջվում: Թերությունների հետամուտ Պարոնյանի գրիչը, նկատի ունենալով թատերախմբի օտարահեղինակ և թարգմանված պիեսներից կազմված խաղացանկը, արձանագրում է. «... Օտար խաղերով սկսավ ազգին զեղծումներին հարվածել, ճիշտ այն մարդուն պես, որ ապտակն օտարին գլխուն իջեցնելով՝ տղան ծեծած ըլլալ կը կարծե: Այդ ընթացքը մինչև այսօր փոխած չէ...»³¹: «Արժանավայել հանգստությամբ կյանք» անցկացնելով՝ Վարդուլյանը միշտ կառքով է շրջում: Իր գործի կարևորության գիտակցումով նա ասում է. «Թատրոնն իմս չէ, ազգինն է»³²:

Թովմաս Ֆասուլյաճյանի դիմապատկերում հանգամանորեն ներկայացված է նշանավոր դերասանի կյանքը և նկարագիրը, որոնք լույս են սփռում Պոլսի թատերական աշխարհի իրողությունների վրա: Ներկայացնելով դերասանի այցը Թիֆլիս և տասը այլ քաղաքներ՝ Պարոնյանը գրում է, թե՛ «ներկայացումներ տվավ ոչ թե ստակ վաստկելու, այլ դերասանության արվեստը Ռուսաստանի մեջ տարածելու համար»³³: Ասել է, թե արևմտահայ գործիչները միշտ էլ նախամեծար են համարել իրենց մշակութային դրությունը արևելահայերի նկատմամբ:

Երանուհի Գարագաշյանի դիմապատկերը գրված է առանց հեզնաբանության, դրվատանքով: «1865-ին, երբ Վարդուլյան էֆենտին ոտքի ամանները ձեռքը բռնած փողոցե փողոց, թաղե թաղ կը վազեր դերասանուհի գտնելու հա-

²⁸ Տարեցույց Նշան-Պապիկյան, Բ. տարի, էջ 117:

²⁹ Հ. Աճառյան. Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, էջ 19:

³⁰ Հ. Պարոնյան, հ. 2, էջ

³¹ Նույն տեղում, էջ 254:

³² Նույն տեղում, էջ 255:

³³ Նույն տեղում, էջ 267:

մար այն աստեղները դերասանուհի մը գտնելը հիմա հայերեն ներկայացումներուն թատրոնի մեջ հանդիսական գտնելէ ավելի դժվար էր ... ամեն դուռ կը զարներ ու «դերասանուհի մը ունի՞ք մի» կը հարցունէր, դիպվածով Գարագաշյանին դուռը զարկավ»³⁴: Պարոնյանը վստահ է, որ Ե. Գարագաշյանը դեռ առաջ կգնա՝ «ի պարծանս հայ թատրոնին»:

Օսմանյան կայսրությունում հայերը նաև ընտիր ճարտարապետի համբավ ունեին: Արքունի ճարտարապետությունը ժառանգաբար հանձնված էր Պալյանների նշանավոր գերդաստանին: Պարոնյանի կողմից «Ազգային ջոջերի» շարքում Սարգիս Պալյանի (1834–1899) ընտրությունը պատահական չէր: Նա Կ. Պոլսում արքունի ճարտարապետ (1823–1866) Կարապետ Պալյանի (1800–1886) որդին էր, ճարտարապետ էր, կրթություն էր ստացել Փարիզում, իսկ եղբոր՝ Հակոբ Պալյանի մահվանից հետո դարձել է արքունի ճարտարապետ՝ նախագծելով բազմաթիվ շենքեր: Հայրենիքի նկատմամբ տածած սիրով, հայ ժողովրդի պատմության, մշակույթի մեջ ունեցած ավանդով է Պարոնյանը կարևորում ազգային երևելիների դերը հայ իրականության մեջ: Այս առումով նա առանձնացնում է Ս. Պալյանին՝ ազգի այն քիչ մարդկանցից, «որոնք իրավամբ իրենց ազգին փառքն ու պարծանքն են»³⁵: Նրան ներկայացնելով իբրև ճարտարապետի, որի նախագծերով կառուցած «շենքերն այնչափ արհեստով և գիտությամբ կառուցված են, որ զանոնք դիտողը կը հիանա և իրեն կը հարցունէ, թե՛ արդյոք Բարիզէն՝ րեբել տված են այս շենքերը», իբրև «մեքենագետի», «բնագետի» և «քիմիագետի», բանաստեղծի՝ Պարոնյանը կարևորում է «գաղտնապես բարիք ընելու»՝ բարեգործի հատկությունը և համեստությունը՝ ասելով. «Հպարտության նշույլ իսկ չունի իր վերա»³⁶: Վերջինիս հակադրում է այլ ազգայինների. «Մեր ազգին մեջ կան այնպիսի անձեր, որ հպարտության գագաթը բարձրացած են, և այս մարդերն այնպիսի մարդեր են, որ բնավ իրավունք չունին հպարտանալու»³⁷: Պարոնյանը կարևորում էր մայրենիի դերը հայի համար: Գովեստի խոսքերի է արժանացնում ճարտարապետ Ս. Պալյանին, որի կուրծքը զարդարում են աշխարհի հզոր տերությունների պատվո նշանները և որը, սակայն, խոսում է հայերեն, սիրում է իր մայրենի լեզուն: Մինչդեռ շատ էֆենտիներ կամ հայեր, երբ որոշ աստիճանի են հասնում, «հայերեն չխոսելու ուխտը կ'ընեն»³⁸:

«Ազգային երևելիների» շարքում առանձնանում է Կարապետ պեյ Երամյանի դիմանկարը, որն ընդամենը երեք նախադասություն է ամփոփում. «Կարապետ պեյ Երամյան ծնած է 1839-ին: Կազմով բարեձև, սև աչքերով, սև ընքվիներով մարդ մ'է: Մզկիթ մը շինել տված է»³⁹: Պարոնյանի այս կարճ գնահատականն ավելի քան խոսում է: Կարապետ պեյը պոլսահայ մեծահարուստ ամիրաններից էր: Մինաս Չերազի վկայությամբ՝ հատուկ սեր ուներ արևելյան երաժշտության, տարաշխարհիկ ծաղիկների ու բույսերի նկատմամբ, իր եղե-

³⁴ Նույն տեղում, էջ 269:

³⁵ Նույն տեղում, էջ 232:

³⁶ Նույն տեղում, էջ 233:

³⁷ Նույն տեղում:

³⁸ Նույն տեղում, էջ 232:

³⁹ Նույն տեղում, էջ 224:

մական պարտեզից ոչ հեռու կառուցել է տալիս մի մզկիթ՝ թուրք երաժշտի ցանկությանը. ամիրան հրապուրված էր վերջինիս երգերով⁴⁰: Պոլսահայ շրջանակներում ասում էին, որ այդ մենամոլությունը Գարապետ բեյին մոռացնել էր տվել ազգային ամեն պարտավորություն: Թեև, ինչպես նշում է Մ. Չերազը, Գարապետ ամիրան, իր և Արփիար Արփիարյանի աղաչանքներին անսալով, «մեծկակ գումար» է «ցնծացել» Միացյալ ընկերության՝ հոգուտ գավառների բազմաթիվ դպրոցների կազմակերպած տարեկան բարեգործական պարահանդեսի առիթով: «Ես փորձով գիտեմ թե անհնար չէր օգտվիլ իրմե, եթե ճարտար լեզու գործածվեր, փայփայելով այն մարդկային զգացումը որ անձնահաճություն կ'կոչվի»⁴¹, - նկատում է Մ. Չերազը:

Հետագայում Պարոնյանի հիշատակած մզկիթի մասին Հ. Աճառյանը գրում է, որ գտնվում էր հայկական եկեղեցու հարևանությամբ և արհամարհանքի է արժանացել անգամ թուրքերի կողմից⁴². «1889-ին, երբ հրաժեշտ տվի վերին Վոսփորին, անցա այդ շենքին (մզկիթի - Մ. Գ.) առջևեն: Գարշահոտություն կ'բուրեր ամեն կողմ, և փայթոցավոր ու ֆեսավոր մահմետականներ, ավերակներուն մեջ քաշված գոհացում կու տային բնական պետքի մը...»

Այսպես վարձատրվեցավ թրքասիրությունը միամիտ Հայի մը...»⁴³: Գարապետ ամիրայի կյանքի գործը հանդիսացող տիրահոշակ մզկիթն անգամ մահմեդականների համար նպատակին չճառայեց:

«Ազգային ջոջերում» ազգին մատուցած ծառայությունները կարևորելու տեսակետից է ներկայացված Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը (1837-1884): Թերությունների առջև ավելի սրատես Պարոնյանը նրան դիմում է խնդրանքով. «... Քանի մը փոքր թերություններ ունեցեք, որ իմ գրիչիս ալ սիրտը չկոտրի»⁴⁴: Ըստ երգիծաբանի՝ Ն. Վարժապետյանը՝ որպես ազգային և հոգևոր անթերի գործիչ, «անձնվիրությամբ կ'աշխատի յուր ազգային կացությունը բարվոքելու համար»⁴⁵: Պարոնյանի գնահատմամբ՝ սրբազանը շահեկանորեն տարբերվում է մյուս հոգևորականներից. «Շատ կրոնավորներ հովիւ քաջ դնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց իւրոցը սխալ հասկնալով կ'ելնեն իրենց ժողովրդյան վրա կը նստեն և անոնց անտանելի բեռ մը կ'ըլլան. Վարժապետյան աշխատած է միշտ յուր արարած հոտին լուծն թեթևցնելու»⁴⁶: «Պատմություն մեր ազգին համար անմահացուցած է անոր անունը»⁴⁷: Նա գնահատում է Ն. Վարժապետյանի քրիստոնեական ներողամտությունը, վեհանձնությունը. «Իրեն թշնամուն անգամ բարիք ըրած ժամանակը մտքեն չանցուցեր, որ ինձի ըրած թշնամության փոխարեն իրեն բարիք կ'ընեն»⁴⁸:

Հեղինակն իր «բնորդներին» քննում է արդարության, ճշմարտության, հանրային շահի առաջնայնության բարոյագիտական կարգերի տեսանկյունից:

⁴⁰ Տե՛ս Մի և ս ս Չ եր ա գ. Գենսագրական Միւտններ, Պարիս, 1929, էջ 58:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Տե՛ս Հ ր. Ա ճ ա ո յ ա ն. Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 121-122:

⁴³ Մի և ս ս Չ եր ա գ. նշվ. աշխ., էջ 58:

⁴⁴ Հ. Պ ա Ր ո ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 2, էջ 215:

⁴⁵ Նույն տեղում, էջ 221:

⁴⁶ Նույն տեղում էջ 219:

⁴⁷ Նույն տեղում, էջ 222:

⁴⁸ Նույն տեղում, էջ 221:

Պատրիարք Ն. Վարժապետյանը «անխոնջ ջանիվք աշխատեցավ և մեծ հոգ տարավ Արշակունյաց վարժարանի բարեկարգությանը»⁴⁹: 1861, 1867 և 1869 թթ. Կրոնական ժողովի ատենապետն էր: «Նորին Սրբազնությունը որչափ խոհականությամբ կը վարեր այս պաշտոնը,.... Մաքուր խղճով.... Առանց դուրս ելնելու այն սահմանեն, որ կրոնքը զծած է»⁵⁰,– գրում է Պարոնյանը: Պատրիարքը նաև քաղաքական գործունեություն է ծավալել. նրա օրոք պատրիարքարանը հարաբերություններ հաստատեց Պոլսում օտարերկրյա դեսպանների հետ: «Վարժապետյան իր դիվանագիտական ճարտարությանը շնորհիվ, կրցավ ազգային դատը պաշտպանել Սուլթանին ու իր նախարարներուն առջև ալ, որոնք միշտ ակնածեցան այս մեծ պատրիարքեն...»⁵¹,– նկատում է Մ. Չերազը: «Մա ինքն էր, որ հայկական խնդիրն հարույց և մինչև այսօր անձնվիրությամբ կ'աշխատի յուր ազգին կացությունը բարվոքելու համար»⁵²,– վկայում է Պարոնյանը: Նրա համոզմամբ «Թե որ ամեն պատրիարքներ Ներսեսի պես աշխատած ըլլային, ազգն այսօր այսչափ տառապանաց մատնված տեսնելու դժբախտությունն չէինք ունենար»⁵³: Այդ անձնվեր աշխատանքի շնորհիվ «յուր ժողովրդյան ոչ միայն սիրուն, այլև երախտագիտությանն էլ արժանացավ»⁵⁴: «Իբրև ատենաբան արժանի է այն համբավուն, գոր իրավամբ կը վայելէ... Նորին սրբազնության խոսքն անուշ է և իրեն ներկայացողներուն համակրությունը կը գրավէ»⁵⁵,– գրում է Պարոնյանը Ն. Վարժապետյանի մասին:

Ժողովրդի նկատմամբ հոգատար վերաբերմունքի, ազգային շահի պաշտպանության համար Պարոնյանն ազգային երևելու «տիտղոսի» է արժանացրել Մուշի Ս. Կարապետ վանքի վանահայր Վահան Պարտիզակցուն (Տեր-Մինասյան, 1805–1875): Երևելին նվիրվել է ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությանը, զբաղվել գրականությամբ, հրատարակել արժեքավոր աշխատություններ: «Ազգային ջոջերու մեջ Վահան վարդապետին մտնելու գաղտնիքը» բացահայտում է ինքը՝ Պարոնյանը: 1878 թ. ռուսական բանակի նահանջի ժամանակ Էրզրումից ու նրա շրջակայքից դուրս էր գալիս մեծ գաղթականություն: Կ. Պոլսի, ինչպես և Թիֆլիսի ազգային կազմակերպություններն ու մամուլը դեմ էին այդ գաղթականությանը, որովհետև ռուսական բանակի հետ հայ բնակչության զգալի մասի գաղթեցումը դեպի Կովկաս կարող էր նոսրացնել հիշյալ վայրերի բնակչությունը և առիթ տալ թուրքական կառավարությանը՝ հրաժարվելու արևմտահայությանն ինքնավարություն տալու մտքից: Պատրիարքը ցանկանում էր հոգևորականներ ուղարկել Կարին՝ գաղթը կասեցնելու գործին նպաստ բերելու համար: Մակայն, ինչպես Պարոնյանն է վկայում, մի վարդապետ երկու հազար ոսկի է պահանջում այդ գործը հանձն առնելու համար, իսկ մի եպիսկոպոս (ակնարկում է Խորեն Գալֆայանին)

⁴⁹ Նույն տեղում, էջ 216:

⁵⁰ Նույն տեղում, էջ 218:

⁵¹ Մ ի ն ա ս Չ եր ա գ. նշվ. աշխ., էջ 14:

⁵² Հ. Պարոնյան. Երկերի ժողովածու, հ. 2, էջ 222:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ Նույն տեղում, էջ 219:

⁵⁵ Նույն տեղում, էջ 222:

«Պոլիսեն ճամբա ելնելու համար երեք հազար ոսկի ուզելեն ետքը, չորս ձի, երկու կառք և տասներկու շիշ լավանտա կը պահանջեր Հայաստանի մեջ գաղթականության առաջին առնելու համար»⁵⁶: Եվ երբ «պատրիարքն հուսահատած լապտեր ի ձեռին կրոնավոր կը փնտռեր՝ Վահան վարդապետ կ'ընդունի այս պաշտոնն և իբրև փոխարինություն ուրիշ բան չպահանջեր, այլ միայն հրացան մը և տասներկու շիշ օղի»⁵⁷: Վահան վարդապետն անմիջապես ճամբա է ելնում՝ հրացանը ուսից կախած: Հասնելով Դերջան՝ հորդորում է ժողովրդին, որ չհեռանան: Կարին է հասնում այն օրը, երբ «իրմե ժամ առաջ մը մտած էր Հայկական խնդրույն անհաջողության լուրը (նկատի ունի 1878 թ. Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցի կրած անհաջողությունները – Ս. Գ.)»: Կարինում Վահան վարդապետը ցանկանում է կարդալ պատրիարքի կոնդակը, որի նպատակն էր համոզել ժողովրդին՝ չգաղթել, սակայն կարինցի Հարություն եպիսկոպոսն ընդդիմանում է: Վարդապետն ուղևորվում է Կարս, ներկայանում գեներալ Լազարնին, որն էլ նրան ուղարկում է գեներալ Ղուկաստովի մոտ, վերջինս էլ Թիֆլիսի ճանապարհն է ցույց տալիս: Շուտով լուր է հասնում, որ Ալաշկերտի ու Բայազետի բնակչությունը պետք է գաղթի Ռուսաստան: Վարդապետը մեկնում է Բյուրական՝ Գևորգ Դ կաթողիկոսի ամառանոց: Կաթողիկոսը հայտնում է, որ ինքը չեզոքություն է պահպանում: Բայազետ վերադառնալով՝ վարդապետը չի կարողանում կանխել բնակչության գաղթը և նորից վերադառնում է Բյուրական, ներկայանում կաթողիկոսին և ասում. «Ձեր անհոգությամբը երկու, երեք հազար տուն կորսվեցավ. Հարյուր քսան վարդապետ և հարյուր քսան հազար ոսկի ունենալով չուզեցիր օգնության հասնիլ քանի մը գյուղերու... Անոնց արյունը Ձեր գլուխն ըլլա»⁵⁸:

Պարոնյանը բարձր առաքինություններով է գնահատում Պողոս Պոյնուեյրիյանին (1805–1875), որի «Ազգային ջոջերու մեջ գտնվիլն անշուշտ բերկրություն պիտի պատճառե մեր ընթերցողներուն, երբ պիտի տեսնենք անոնք, որ ազգին մեջ կան այնպիսի կրոնավորներ, որ ամենուս սիրույն և հարգանացն արժանացած են»⁵⁹: Ազգային այս երևելու վարքագիծը հանդիմանանքի տեղ չի թողնում, ուստի Պարոնյանը մի քանի վայրկյանով խնդրում է «փոխ առնել» մերթ Պլուտարքոսի գրիչը, մերթ Ութուճյանի, քանի որ իր գրիչը «գովել չգիտեր»⁶⁰: Հայր Պողոս Պոյնուեյրիյանի առաքինի վարքով հիացած Պարոնյանը թվարկում է նրա ազգանվեր գործունեությունը: Նա խոստովանում է, թե չի կարող թույլ տալ, որ «բարի մարդերն առանց հիշատակի անցնին երթան»⁶¹: Պ. Պոյնուեյրիյանը «ինչպես ամիրաներուն՝ նույնպես ալ աղքատներուն սիրելի է», նա «Ուրիշ կրոնավորներու պես չէ, որ միշտ հարուստներուն տուները պտրտի և աղքատները ռոտակոխ ընեն»⁶²: Համեստ քահանան «Առաջին քայլ բարվոքման ազգիս ի Հայաստան աշխարհի» վերնագրով աշխատության մեջ

⁵⁶ Նույն տեղում, էջ 153–154:

⁵⁷ Նույն տեղում, էջ 154:

⁵⁸ Նույն տեղում, էջ 155:

⁵⁹ Նույն տեղում, էջ 195:

⁶⁰ Նույն տեղում, էջ 187:

⁶¹ Նույն տեղում:

⁶² Նույն տեղում, էջ 194:

գրում է. «Պաշտոնակից եղբայրք իմ սիրեցյալք, ի՞նչն է մեր կոչումը, բայց եթե ժողովրդյան հոգը ըստ ամենայնի: Ի՞նչ պիտի ըլլա մեր նպատակը, բայց եթե ժողովրդյան կատարյալ երջանկությունը»⁶³: Իր աշխատությունն էլ գրել էր հրապուրված Մ. Նալբանդյանի «Երկրագործության» գաղափարներով. հորդորում էր ազգայիններին երկրագործական վարժարաններ բացել: «Ժողովրդյան հոգը ըստ ամենայնի» Պարոնյանը համարում էր ազգային երևելիների, մասնավորապես, հոգևոր դասի կոչումը: «Ժողովրդյան օգտին գործածեք Ձեր խոսքը, Ձեր ազդեցությունը, Ձեր միջնորդությունը և Ձեր օրինակը»⁶⁴, – դիմում է Պարոնյանը Պոյնուեյրիյանին:

Ազգային այս երևելի հակահասունյան շարժման մասնակից էր: «Ժամն է խոստովանելու, որ սա ինքն է ծնունդ տվող Հակահասունյան դատին: Լավ կճանաչեք Հասունյանն և անոր քաղաքականությունն և շատ աղեկ գիտեր ժողովուրդն անկե զգուշացնելու եղանակը»⁶⁵, – գրում է Պարոնյանը: Իր իսկ վկայությամբ՝ նա բարեպաշտ քահանայի կյանքը ներկայացնում է «Լուսինյանե, հրաշագործե և Հասունյանե ետքը... ապացուցելու համար թե լույսը խավարեն ետքը կուգա»⁶⁶:

Անտոն Հասունյանը (1810–1884) ժամանակի նշանավորներից էր: Նա էր «կաթոլիկոս հռովմեական այն հայերուն, որոնք նախապատիվ կը սեպեն իրենց ազգային իրավունքներն ս. Պապուն հողաթափերուն մեջ տեսնել, քան իրենց ձեռքերուն»⁶⁷: Ա. Հասունյանի դիմապատկերը ծավալուն է, փաստերով հարուստ ու հեզնաբանությամբ՝ անխնա: Հասունյանի կենսագրական իրողություններում Պարոնյանը կարևորում է հետևյալ հանգամանքը. «Պետք է, անհրաժեշտ է հոս հիշել, ... որ այս կրոնավորն զավակ է Յաղուպ Բայն Յուսեֆ Հասո անուն բերիացի ասորիի մը և ոչ թե հայու զավակ, ինչպես կ'ավանդեն անհավատարիմ պատմագիրներեն ոմանք»⁶⁸: Պարոնյանը մերժողական ու դատապարտող վերաբերմունքի է արժանացնում հայ կաթոլիկ համայնքի պարագլուխ Անտոն Հասունյանին, որը դժգոհության ու պայքարի ալիք բարձրացրեց ոչ միայն լուսավորչական, այլև կաթոլիկ հայության շրջանում: Հասունյանը պայքար ծավալեց ընդդեմ «Համազգյաց ընկերության», որը նպատակ ուներ լուսավորական, մշակութային ձեռնարկումներով նպաստել ազգային միաբանությանը: Մոլեռանդ գործիչն արատավոր որակեց «Համազգյացի» գործունեությունը, իսկ անդամներին՝ ապստամբներ՝ բողոքներ ներկայացնելով սուլթանական կառավարությանը և պահանջելով արտքել նրանց: 1852-ին «Համազգյաց ընկերությունը» դադարեց գոյություն ունենալուց: 60-ական թվականների կեսերից սկսվեց Հասունյան-հակահասունյան հայտնի պայքարը՝ ստանալով համաժողովրդական բնույթ:

Այս շրջանում ազգային գործերում ազդեցիկ դերակատարություն ուներ Գրիգոր Էնֆիեճյանը (1840–1886): Հակահասունյան դատի քաղաքական պայ-

⁶³ Նույն տեղում, էջ 192:

⁶⁴ Նույն տեղում:

⁶⁵ Նույն տեղում, էջ 190:

⁶⁶ Նույն տեղում, էջ 195:

⁶⁷ Նույն տեղում, էջ 106:

⁶⁸ Նույն տեղում, էջ 107:

մանները նպաստավոր համարելով՝ նա Բարձր Դոնից պահանջում էր «ազգի իրավունքները»: Այդպես «ճանչցուց զինքը բոլոր բարձրաստիճան պաշտոնատարներու, որոնցմե ոմանք լավ ընդունեցին զինքն, ոմանք ալ բնավ չընդունեցին»⁶⁹ և ստանձնեց ազգային գործերի ղեկավարությունը: Պարոնյանի դիտարկմամբ, սակայն, Էնֆիեճյանն իր անխոհեմ բնությամբ ու վարմունքով քիչ օգուտ և շատ վնաս հասցրեց հակահասունյաններին: Պարոնյանը, որպես բարոյական հատկանիշի դրսևորում, կարևորում էր բանականության դրսևորումը կրթերի, զգացմունքների նկատմամբ: Այս տեսակետից նա քննադատում է Գրիգոր Էնֆիեճյանի վարքը. «խոհեմություն բառն իրեն համար նշանակություն չունի»⁷⁰: Ազգային երևելու ազգասիրության վերաբերյալ երգիծաբանը նկատում է. «Չենք կարող ըսել՝ թե այս անձն բնավ ազգասիրություն չունի, բայց միայն կը խորհինք, թե կատուն մուկը բռնելու պատրաստված ժամանակը յուր տիրոջն փարություն ընելու կը խորհի, թե յուր փորը կշտացնելու»⁷¹:

Պարոնյանը Հասունյան-հակահասունյան պայքարի դիտակետից է գնահատել նաև վիպասան, հասարակական գործիչ Հովսեփ Շիշմանյանին (Օերենց, 1822–1888): Ժամանակին մեծ ծավալների հասած կաթոլիկ քարոզչության, հոգեորսության դեմ պայքարից նա ևս անմասն չմնաց: Կաթոլիկներին միանգամից լուսավորչական դարձի բերել ցանկացող Հ. Շիշմանյանի՝ չափից ավելի ջանադրությունը նա ծաղրում է՝ միաժամանակ արդարացնելով. «Ազգային միության համար ունեցած անհաղթ սերն էր, որ ասանկ կարծիքներու մեջ կատներ կը նետեր զինքը...»⁷²: Պարոնյանն անդրադարձել է ազգային երևելու շատախոսության հանգամանքին. «Ոչ նվազ նշանավոր հանդիսած է յուր ատենաբանություններովն... Ամեն անգամ ատենաբանությունը լմնցներ՝ լսարանին սպասավորը օթյակներուն դռները կը բանար և կարթնցներ անոնց մեջ գտնվող ունկնդիրներին, իմացնելով, թե ատենաբանությունն վերջացած է, թե ազատ են իրենց տուներն երթալու...»⁷³: Երգիծաբանը քննադատում է Շիշմանյանի անշրջահայեցությունը. «Կը վռնտեր ժամանակն և անոր պաշտոնն իր վրա առնել կուզեր, և երբ կրիա մնալ հարկ էր իրեն՝ նապաստակի պես կը վազեր»⁷⁴: Ըստ Պարոնյանի՝ անգամ գրականության մեջ Հ. Շիշմանյանը հասու չի լինում մարդկային էությունների բացահայտմանը: Ակնարկելով Օերենցի վիպապաշտա-

⁶⁹ Նույն տեղում, էջ 182:

⁷⁰ Նույն տեղում, էջ 183:

⁷¹ Նույն տեղում, էջ 186:

⁷² Նույն տեղում, էջ 79:

⁷³ Նույն տեղում, էջ 82–83:

⁷⁴ Նույն տեղում, էջ 83:

կան գրականությունը՝ նա նկատում է, թե վիպասանը «կը ներկայացնէ անձերն ոչ թե ինչպէս որ են, այլ ինչպէս որ կերևին»⁷⁵:

Պարոնյանի ժամանակակից երևելիներից էր Խորեն Գալֆայանը (1831–1893): «Խորեն եպիսկոպոս, աստվածաբան, կատակերգակ, ազգային երեսփոխան, բանաստեղծ: 1861-ին Գալֆայան, 1870-ին Նար Պէյ, 1879-ին Լուսինյան...»⁷⁶, – ահա այսպէս է երգիծաբանն սկսում նրա դիմապատկերը: Նար-Պէյի կեղծ մականունների, նույնքան անհաստատ ու հարափոփոխ կարծիքների վերաբերյալ Պարոնյանը գրում է. «Խորեն եպիսկոպոս յուր կարծիքներուն հետ ալ այնպէս կը վարվի, ինչպէս յուր մականուններուն հետ, միայն սա տարբերությամբ, որ կարծիքներն ինն օրը անգամ մը կը փոխէ, մինչդեռ մականունները ինչ տարին անգամ մը»⁷⁷: Պարոնյանը հերքում է Լուսինյանների արքայական տոհմից սերելու մասին Նար-Պէյի և նրա եղբոր՝ Ամբրոսիոս Գալֆայանի հավաստացիումները: Երգիծաբանը համոզված էր, որ արարքները պետք է վերահսկվեն բանականությամբ, հակառակ դեպքում՝ ցանկություններն ու կրքերը կկուրացնեն հոգին: Խորեն Գալֆայանի «... վարքեն կրնանք գուշակել թե յուր հարգած սկզբունքներն հետևյալներն ըլլալու են...»⁷⁸: «Թո՛ղ մի տար որ կիրքերդ գերի ըլլան անձիդ» սկզբունքը հավաստում է, որ «պատվելիի» վարքը առաջնորդվում է կրքերով: Ըստ Պարոնյանի՝ հոգևորականին անհարիր պշտամտությամբ է կանխորոշվում Գալֆայանի վարքը. «Զգաց, թե վանքը խիստ անձուկ ասպարեզ մ'էր համեմատորեն յուր ընդարձակ հմտություններուն, որովք օր մը փայլ պիտի առներ յուր անունն պճնասիրության աշխարհին մեջ»⁷⁹:

1870 թ. Բերայի հրդեհի ժամանակ Գալֆայանի չհրապարակված, ձեռագիր ստեղծագործությունների մի մասը հրո ճարակ է դառնում: Այս մասին Պարոնյանը կարծիք է հայտնում, թե «Կրնանք մխիթարվիլ յուր հրատարակած գործերով, որոնք քիչ բացառությամբ, արժանիք ունին... մոխիր դառնալու»: Այդուհանդերձ, Պարոնյանը նշում է, որ Խորեն եպիսկոպոսը «Օտար լրագիրներու մեջ անդրլեռնականներու դեմ պաշտպանած է Հայաստանյայց եկեղեցին և ժողովրդյան համակրությունը գրաված է»⁸⁰:

1855 թ. Խ. Գալֆայանը, որ մինչ այդ հավատարիմ էր Մխիթարյան միաբանությանը և կաթոլիկ եկեղեցուն, դառնում է լուսավորչական: Դավանափոխության պատճառը Վատիկանի առաջադրանքով

⁷⁵ Հ. Պարոնյան. Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1964, էջ 72:

⁷⁶ Հ. Պարոնյան. Երկերի ժողովածու, հ. 2, էջ 9:

⁷⁷ Նույն տեղում, էջ 15:

⁷⁸ Նույն տեղում, էջ 17:

⁷⁹ Նույն տեղում, էջ 10:

⁸⁰ Նույն տեղում, էջ 17:

արևմտահայ իրականության մեջ քայքայիչ աշխատանք կատարող Հասունյանների դեմ մղվող պայքարի ուժեղացումն էր: Գալֆայանը ազգային գաղափարներին հավատարիմ այն երեք կաթոլիկների (Ս. Թեոդորյան, Խորեն և Ամբրոսիոս Գալֆայաններ) թվում էր, որոնք դարձ կատարեցին հայրենի եկեղեցի՝ միանալով հակահասունյան շարժմանն ընդդեմ Վատիկանի: Ֆրանսիական մամուլում նա տարբեր ծածկանուններով պայքարում էր կաթոլիկ քարոզչության դեմ:

«Այնպիսի սրտառույզ դամբանականներ կ'արձակեր, այնպիսի պերճախոսությամբ կը գովեր արքայությունն, որ ներկա գտնվողները մեռնելու փափագ կ'զգային»⁸¹, – գրում է մեծ երգիծարանը Խ. Գալֆայանի արտասանած դամբանականների ու պերճախոս ճառերի մասին:

Ի դեպ, իր դիմապատկերը գրվելուց տասներկու տարի անց Խ. Գալֆայանը՝ Նար - Պեյր, դամբանական է կարդում Պարոնյանի հուղարկավորության ժամանակ. «Գեր. Նարպեյ Սրբազան խոսեցավ դամբանականը, հուզյալ շեշտերով նկարագրելով Պարոնյանի կյանքն, հանձարեղ հրապարակագրություններն ու անգուգական գրիչը... Թեև Պարոնյան մեռավ, ըսավ քարոզիչ Սրբազանը, սակայն յուր գործեր անմահ կը մնան և պետք է գիտնալ օգտվիլ անոր թողած արդար քննադատություններն, որպես զի կարենալ հանդարտ հանգչիլ յուր գերեզմանին մեջ»⁸²:

Մյուս բարձրաստիճան հոգևորականը, որի կենսագրության սովետոտ կողմերը մանրամասնել է Պարոնյանը, Մկրտիչ Տիգրանյանն է (1815–1884): Նրան անվանում էին «հրաշագործ», «ապուրի վարդապետ», «յոթն փորձանք»: Պարոնյանը նշում է, որ նա մեկն էր բազմաթիվ այն անարժաններից, որոնց վարդապետ, քահանա էին ձեռնադրում, եպիսկոպոսության աստիճան շնորհում՝ ազգի իրավունքները հանձնելով նրանց ձեռքը: Մկրտիչ եպիսկոպոսի կյանքի «մեկ քառորդն անցած է ճամփորդության մեջ, մեկ քառորդը՝ բանտերու մեջ, մեկ քառորդը մոխիր խառնելու մեջ (ըստ մի ավանդության՝ վանքերից մեկում սատանան տարին մի քանի անգամ գալիս և խառնում էր օջախի մոխիրը՝ խոտվություն առաջացնելով – Մ. Գ.) և մյուս քառորդն ալ ստակ հավաքելու մեջ»⁸³: Բարձրաստիճան հոգևորականի զեղծարարություններն ու կեղծիքներն այնքան ակնհայտ էին, որ պատրիարքարանից հրաման է գալիս՝ վերցնել նրա ձեռքից կոնդակն ու բանտարկել Մշո Ս. Կարպետ վանքում, որի հոգևոր առաջնորդն էր: Սակայն «գործող մարդ մը բանտին մեջ չկրնար երկար ատեն մնալ»⁸⁴, ուստի ազատվելու

⁸¹ Նույն տեղում, էջ 17:

⁸² Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, էջ 176:

⁸³ Նույն տեղում, էջ 72:

⁸⁴ Նույն տեղում, էջ 67:

համար լուր է տարածում, որ կարող է գտնել ասորի պատմիչ Մար Աբաս Կատինայի «Հայոց պատմությունը» (այս «Պատմությունը» հիշատակվում է Մ. Խորենացու գրքում և կորած է համարվում – Մ. Գ.): Ամիրաներից մեկը գումար է առաջարկում սրբազանի ազգանվեր «առաքելության» իրագործման համար: Հետագայում որպեսզի պատրիարքարանն այլևս չկարողանա իրեն պատասխանատվության ենթարկել, եպիսկոպոսն ինքն է բողոք-ադրեսագիր ներկայացնում սուլթանին՝ ընդդեմ պատրիարքի: Մկրտիչ եպիսկոպոսին Կ. Պոլսից հեռացնելու պատրիարքարանի ջանքերն ապարդյուն են անցնում. նա նշանակվում է Սամաթիայի Ս. Կարապետ եկեղեցու քարոզիչ: Բայց քանի որ քարոզչությամբ բավական դրամ չէր կարող վաստակել, սկսում է «հրաշագործություն» անել՝ «բժշկել» կույրերի, կաղերի, այսահարների: Իսկ, երբ Պոլսի պատրիարքը դիմում է կաթողիկոսին՝ «հրաշագործն յուր իշխանության տակ առնե», վերջինս հայտնում է, թե «չուզեր զայն յուր քովն պահել, ... թե ինք արդեն բավական ունե անոնցմե»⁸⁵:

Հարկ է նկատել, որ արևելահայերից միայն ականավոր հրապարակագիր, խմբագիր, գրական-հասարակական գործիչ Գրիգոր Արծրունին (1845–1892) է արժանացել «Ազգային ջոջերի» շարքում դասվելու պատվին: Արծրունու խմբագրած «Մշակի» (1872–1892) դերը, ինչպես հայ պարբերական մամուլի պատմության, այնպես էլ ժամանակի քաղաքական, մշակութային, հոգևոր կյանքում, վիթխարի է: Պարբերականը նկատելի ազդեցություն է թողել արևմտահայ հասարակական մտքի վրա հատկապես 1877–78 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին՝ խոշոր դեր կատարելով Հայկական հարցի, հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների միավորմանն ուղղված հարցադրումների վերհանմամբ: Պարոնյանը գնահատում է Արծրունու ազատամտականությունը, սակայն համաձայն չէ նրա որոշ գաղափարների հետ, որոնք վերաբերում էին, մասնավորապես, արևմտահայերին: Արծրունին գնահատում էր պատմական պահի կարևորությունը ժողովրդի ազատագրման համար: Հայերին նա զենքի կոչ էր անում, ներկայացնում անիրականանալի պահանջներ, սակայն առանց հաշվի առնելու արևմտահայ կյանքի առանձնահատկությունները: «1878-ին Արծրունու թերթն ամեն օր կը հրատարակվեր այլանդակ գաղափարներով: Կը հանդիմաներ ս. Պատրիարքն, թե ինչու Պատրիարքարանն ու Երեսփոխանական ժողովն Կարին չփոխադրեր, որպեսզի ուժը հոն միանա: Կը կարծեր, անշուշտ, թե Կարին նամակ դրկելու չափ դյուրին բան է Պատրիարքարանն ու Երեսփոխանական ժողովն Հայաստան դրկելն և թե՛ պատրիարքն այս մասին անտարբեր է: Կ. Պոլսո ազգա-

⁸⁵ Նույն տեղում, էջ 71:

յիններն, որ Մշակի այս տեսակ կարծիքները կը կարդային, իրարու ականջն ի վայր կը փսփսային.

Մշակ վաղը պիտի առաջարկե, որ Պոլիսը Կարին փոխադրվի կամ Կարինը Պոլիս»⁸⁶, – գրում է երգիծաբանը՝ ակնարկելով Արծրունու անհրատեսական պահանջները:

Գ. Արծրունու դիմանկարում Պարոնյանը արձագանքում է «Մշակի» ու «Մեղուի» անձնական վիրավորանքների հասած պատմական գրավեճին. «Հայտնի է, որ մեր մեջ որևէ խնդրի մը լուսաբանելու համար երբ վիճաբանություն մը կբացվի՝ բանակո՞վո մեջ իբրև փաստ մեծ տեղ կը բռնեն վիճաբանվողներու մորուքը, հասակը, հագուստը, ծնած քաղաքն և մինչև անգամ այդ քաղաքին բերքը»⁸⁷: Պարոնյանն անդրադառնում է Արծրունու լեզվին, որում շատ էին օտարաբանություններն ու օտար բառերը. «Երբեմն այլանդակ կարծիքներ կը հայտնե այնպիսի այլանդակ լեզվով, որ ընթերցողն կշվարի կը մնա, թե երկու այլանդակություններեն որո՞ւն վրան խնդա և որո՞ւն վրա լա»⁸⁸: Այդուհանդերձ, ըստ Պարոնյանի՝ «Պ. Արծրունին, ի՛նչ որ ալ ըլլա, յուր թերություններովն ավելի ծառայած է ազգին, քան յուր հմտություններովն: Ժողովուրդ մը թմրութենեն սթափեցնելու համար կծու հանդիմանություններն ու խորհրդածություններն ուշիմ ու խոհեմ գրություններեն շատ ավելի օգուտ կ'ընեն. և ասոր քաջ համոզված ըլլալուն համար է, որ խրատելու տեղ կը նախատե և շոյելու տեղ կը խաճնե»⁸⁹: Նա գնահատում է Արծրունու նվիրվածությունն իր գաղափարներին ու հարազատ ժողովրդին. «Իբրև հայ՝ ազգասեր է, և իբրև խմբագիր՝ անխոնջ գրող և կոփող: Արարատյան ընկերության մատուցած ծառայություններն զինքը շատ սիրելի ըրած են ազգայիններուն...»⁹⁰:

Պարոնյանը բարոյական ըմբռնումների իր հայեցակետը ներկայացրել է պատմական կոնկրետ նյութի, պատմական անձանց միջոցով վարքագրությանը բնորոշ անաչառությամբ, ճշգրտությամբ, արժանահավատությամբ:

«Ազգային ջոջերը» XIX դարավերջի արևմտահայ հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի գեղարվեստական երգիծական պատմությունն է: Ըստ այդմ՝ ներկայացվող իրողությունների վավերականությունը, հավաստիությունը, պատմականորեն իրական անձանց առկայությունը թույլ են տալիս նաև վերհանել, գնահատել երկի գրապատմական արժեքը, պատմականությունը:

⁸⁶ Հ. Պարոնյան. Երկերի ժողովածու, հ. 2, էջ 162:

⁸⁷ Նույն տեղում, էջ 161:

⁸⁸ Նույն տեղում, էջ 163:

⁸⁹ Նույն տեղում, էջ 167:

⁹⁰ Նույն տեղում, էջ 165:

ЛИТЕРАТУРНО-ИСТОРИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ «АЗГАИН ДЖОДЖЕР»
(«НАЦИОНАЛЬНЫЕ СТОЛПЫ») АКОПА ПАРОНЫА

МАРИАМ ГЕВОРГЯН

Р е з ю м е

В «Азгаин Джоджер» («Национальные столпы») А. Паронян представил литературные портреты своих современников, сыгравших важную роль в западноармянской действительности второй половины XIX века. Это название полностью соответствует социальному статусу тех деятелей, о которых пишет автор, поскольку от их нравственного поведения зависело качество общественной и национальной жизни армян. «Национальные столпы» – это художественная история западноармянской социальной, политической и культурной жизни. Отображение в нем реальных исторических событий и людей позволяет оценить литературно-историческое значение произведения.

THE LITERARY-HISTORICAL VALUE OF “NATIONAL BIG-SHOTS” AFTER
HAKOB PARONYAN

MARIAM GEVORGYAN

S u m m a r y

In “National Big-shots” H. Paronyan wrote the literary portraits of his contemporaries having a significant role in the Western Armenian reality of the second half of the 19th century. This title thoroughly corresponds to the social status of the personages portrayed by the author as the quality of the public and national life of those people depended on their moral behaviour. “National Big-shots” is the literary reflection of the 19th century Western Armenian social, political and cultural life. The reflection of true historical events and real people makes it possible evaluate the literary-historical value of the work.